

Տեղեկատվական ամփոփագիր Խնայողական հաշիվ

Առավելություններ

- Հաշիվը (այդ թվում acba digital համակարգի միջոցով) բացվում է անվճար*
- Հաշվին առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարի ստացում
- Հաշվին առկա միջոցների ազատ տնօրինում
- Հաշվի անսահմանափակ համալրման հնարավորություն
- Հաշվին առկա միջոցների օգտագործում՝ առանց կուտակված տոկոսագումարների կորստի
- Հաշվով գործարքների իրականացման հնարավորություն

*Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներին առաջին բանկային հաշվի (խնայողական, ընթացիկ, քարտային, ավանդային) բացման դեպքում գանձվում է միանվագ միջնորդավճար՝ 15,000 ՀՀ դրամ, բացառությամբ այն դեպքի, երբ հաշիվը բացվում է Բանկի սովորական (հասարակ) բաժնետոմսեր ձեռք բերելու կամ վերջիններիս բաժանորդագրվելու համար կամ աշխատավարձը Ակբա բանկի միջոցով ստանալու նպատակով:

Սպասարկման սակագներ

Խնայողական հաշիվները բացվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով:
Հաշվին առկա միջոցների նկատմամբ բանկը վճարում է տոկոսագումար՝ ստորև նշված պայմաններով.

ԱՐԺՈՒՅԹ	ՏԱՐԵԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՑԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ*
ՀՀ դրամ	3%	3.08%
ԱՄՆ դոլար	0.50%	0.50%
Եվրո	0.20%	0.20%

Տոկոսագումար վճարվում է միայն այն օրերի համար, երբ հաշվի մնացորդը հավասար է կամ գերազանցում է 200,000 ՀՀ դրամը /500 ԱՄՆ դոլարը/500 եվրոն:

Տոկոսագումարի կուտակումը կատարվում է օրական՝ տոկոսադրույքի կիրառման նվազագույն մնացորդի ապահովման դեպքում:

Տոկոսագումարները վճարվում են ամսական՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը:

Հաշվի փակման դեպքում տվյալ օրացուցային ամսվա ընթացքում կուտակված տոկոսագումարները ենթակա չեն վճարման:

*Ուշադրություն՝ Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա, իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը կարող եք գտնել հետևյալ հղմամբ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգ:

Խնայողական հաշիվը սպասարկվում է անվճար, եթե.

Ստորև ներկայացված պայմանների համաձայն ապահովվում է հաշվի միջին օրական մնացորդի նվազագույն շեմը*.

ԳՓՄՄ անդամներ - 5,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ

ռեզիդենտներ - 20,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ

ոչ ռեզիդենտներ - 50,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ

*միջին օրական մնացորդի շեմը վերաբերում է բոլոր արժույթներով հաշիվներին առանձին-առանձին, սակայն հաճախորդը կարող է բոլոր հաշիվների գծով շեմի պահանջն ապահովել առնվազն մեկ ընթացիկ, խնայողական կամ ավանդային հաշվի վրա:

Վերոնշյալ պայմանները չբավարարելու դեպքում Խնայողական հաշվի սպասարկման միջնորդավճար- 300 ՀՀ դրամ (ամսական):

Օգտակար տեղեկատվություն

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Ավանդի գումարը (ՀՀ դրամ)	Ամենամսյա մուծումների չափը (ՀՀ դրամ)**	Գումարը, որը Դուք կունենաք հարկումից հետո*	
		181 օր անց	364 օր անց
1,000,000	20,000	1,134,064	1,270,181
5,000,000	50,000	5,368,634	5,743,415

*** Ներկայացված հաշվարկում գումարը Խնայողական հաշվին մուտքագրվում է 02.12.2024թ.-ին և հաշվարկի ժամկետի ընթացքում հաշվից գումար չի ելքագրվում:**

- **Խնայողական հաշվով հնարավոր է իրականացնել հետևյալ գործառնությունները.**
 - բացված հաշվին մուտքագրել դրամական միջոցներ*,
 - կատարել հաշվից փոխանցումներ,
 - հաշվից գումարներ ստանալ,
 - իրականացնել հաշվի մնացորդի փոխարկումը արտարժույթի,
 - և այլն:

* բացառությամբ 500 եվրո անվանական արժեքով թղթադրամների

- Խնայողական հաշիվը (այդ թվում acba digital ծառայության միջոցով) վերաբացվում է անվճար:
- Խնայողական հաշվի փակման դեպքում՝ նախկինում հաշվարկված սպասարկման վարձը չի գանձվում:
- Խնայողական հաշվի սպասարկման վարձի բացասական մնացորդը 600 ՀՀ դրամին հավասարվելուն պես՝ հաշվի սպասարկման պարտք ավտոմատ կերպով սառեցվում է և դադարեցվում հետագա ամիսների սպասարկման միջնորդավճարների գանձումները:
- Խնայողական հաշվի սպասարկման միջնորդավճարը գանձվում է հաճախորդի հաշվից յուրաքանչյուր ամսվա վերջին բանկային օրը:
- Միջնորդավճարը գանձվում է հաճախորդի դրամային հաշվից: Վերջինիս բացակայության դեպքում այն գանձվում է հաճախորդի արտարժույթային հաշվից, և արտարժույթի փոխարկումը կատարվում է տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ հրապարակած արտարժույթների միջին փոխարժեքով: Հաշվարկը կատարվում է հաշվի բացման և հաշվի փակմանը նախորդող ամիսների համար:
- Խնայողական հաշվի պայմանագիրը կնքվում է անժամկետ:



Ակբա բանկում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 մլն ՀՀ դրամ	7 մլն ՀՀ դրամ	մինչև 16 մլն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով

Ակբա բանկում հաճախորդների հաշիվների բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

Բանկային (ընթացիկ) հաշվի բացման և փակման ընթացակարգ

Հաշիվների սպասարկման սակագներին մանրամասն կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

Անհրաժեշտ է իմանալ

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» ("Know Your Customer") սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու

հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում

Հաճախորդը կարող է հաշվին դրամական միջոցներ մուտքագրել և ելքագրել յուրաքանչյուր աշխատանքային օր՝ Բանկի գործառնական ժամերին: Հաշվի արժույթից տարբերվող արժույթներով հաշվին դրամական միջոցների մուտքի և ելքի դեպքում փոխարկման համար կիրառվում են Բանկի կողմից սահմանված փոխարժեքներ:

- Բանկը պարտավոր է հաճախորդի Հաշվին մուտք եղած դրամական միջոցները մուտքագրել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ օրենքով կամ բանկային հաշվի պայմանագրով,
- Բանկը պարտավոր է հաճախորդի կարգադրությամբ Հաշվից դրամական միջոցներ տալ կամ փոխանցել ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, եթե այլ ժամկետներ նախատեսված չեն օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով կամ բանկային հաշվի պայմանագրով,
- Արտարժույթով բացված հաշիվների դիմաց հաշվարկված տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով՝ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքով: Հաճախորդի ցանկությամբ տոկոսագումարները կարող են վճարվել հաշվի արժույթով:
- Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը: Այն դեպքում, երբ նախատեսված է այլ բան, ապա տրվում է հայտարարություն այդ մասին:
- Որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրում նախատեսված հանգամանքների վրա հասնելուց հետո հետ ստանալու պայմանով ներդրված հաշվի պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը Բանկը չի կարող միակողմանիորեն նվազեցնել: Այն դեպքում, երբ նախատեսված է այլ բան, ապա տրվում է հայտարարություն այդ մասին:
- Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա,
- Առանց հաշվետիրոջ կարգադրության Հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի

հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա,

- Հաշվի պայմանագիրը հաճախորդի դիմումով լուծվում է ցանկացած ժամանակ,
- Դատարանը Բանկի պահանջով կարող է լուծել Հաշվի պայմանագիրը հետևյալ դեպքերում
 - երբ հաճախորդի հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է բանկային կանոններով կամ պայմանագրով նախատեսված նվազագույն չափից,
 - եթե նման գումարը չի վերականգնվել այդ մասին բանկի զգուշացման օրվանից մեկ ամսվա ընթացքում,
 - մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում:
- Բանկն իրավունք ունի առանց հաճախորդին ծանուցելու, իր հայեցողությամբ կասեցնել Հաշվի պայմանագրի գործողությունը կամ լուծել այն, եթե՝
 - Բանկին հայտնի է դառնում, որ ֆիզիկական անձ հաճախորդը մահացել է կամ օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ,
 - Բանկը հիմնավոր կասկած ունի, որ հաճախորդը Բանկում իրականացնում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառություն,
 - Հաճախորդի կողմից Հաշվի բացման օրվանից մեկ տարվա ընթացքում Հաշվով գործառնություններ չեն իրականացվել,
 - Օրենքով կամ Բանկի և հաճախորդի միջև կնքված առանձին պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Սույն կետի համաձայն՝ Հաշվի պայմանագրի գործողության կասեցման դեպքում Բանկը կասեցնում է հաճախորդի Հաշվի սպասարկումը՝ մինչև կասեցման համար հիմք հանդիսացող հանգամանքների վերացումը, իսկ Հաշվի պայմանագրի լուծման դեպքում՝ Բանկը փակում է հաճախորդի Հաշիվը:

Հաճախորդի դիմումը ստանալու նույն օրը Բանկը պարտավոր է փակել հաճախորդի Հաշիվը, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- հաճախորդը Բանկի նկատմամբ ունի չմարված պարտավորություններ,
- Հաշվի մնացորդը գրավադրված է, և չկա Հաշիվը փակելու վերաբերյալ գրավառուի համաձայնությունը,

- Հաշվին առկա է մնացորդ,
- օրենքով և կնքված առանձին պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Տեղեկանքի տրամադրման սակագներ՝

- տեղեկանքի ստացման դիմումի հաջորդ աշխատանքային օրերի ընթացքում – 3,000 ՀՀ դրամ
- տեղեկանքի ստացման դիմումի աշխատանքային օրվա ընթացքում – 5000 ՀՀ դրամ:



Ձեր ֆինանսական տեղեկատուն

fininfo.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵՐ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է: